

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	Որակի ապահովման և վերահսկման ինժեներ
ՎԵՐԱԴԱՍԻ ՊԱՇՇՏՈՆԸ	Տեխնիկական սպասարկման մենեջեր
ԺԱՄԿԵՏԸ	Երկարաժամկետ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐԸ	Վայոց Ձոր, Ամուլսար
ԱՍՏԻՃԱՆԸ	

ՊԱՇՏՈՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- Մշակել և սահմանել ամեն տեսակի ընթացակարգերի ստուգման և փորձարկման չափանիշներ, ինչպես նաև վերահսկել բոլոր փորձարկման մեթոդները՝ պահպանելով գործընթացների բարձր որակական չափանիշները:
- Ստուգել տեղամասում առկա բոլոր նյութերի որակներն ու ապահովել դրանց համապատասխանությունը ծրագրի հատկորոշիչներին ու որակական չափանիշներին, ինչպես նաև համագործակցել բաժնի հետ նյութերի գնման ու որակի ապահովման մասով:
- Հետևել բոլոր փորձարկման ու ստուգման գրաֆիկների ճշգրիտ կատարմանն ու ապահովել դրանց համապատասխանությունը սահմանված կանոնակարգերին, ինչպես նաև համակարգել տարբեր թիմերի աշխատանքները իրականացվող գործընթացների որակական ստուգումների մասով:
- Աջակցել աշխատակիցներին՝ իրազեկելով վերջիններիս գործող որակական չափանիշների մասին, ինչպես նաև ապահովել համապատասխանությունը բոլոր որակական ձեռնարկների ու կանոնակարգերի պահանջներին՝ համագործակցելով կապալառուների ու մատակարարների հետ բոլոր համակարգերի որակական չափանիշների ապահովման հարցում:
- Կազմակերպել բոլոր սարքավորումների բեռնումն ու ամեն տեսակի վտանգավոր նյութերի արդյունավետ պահեստավորումը՝ կատարելով որակի ստուգումները ըստ սահմանված ժանամակացույցերի:
- Վերլուծել բոլոր ապրանքներն ու առկա շեղումները, ինչպես նաև գնահատել բոլոր փաստաթղթերը՝ ապահովելու համար օպտիմալ որակական չափանիշներն ու կազմելով ամսական գեկույցներ կատարողականի գնահատման նպատակով:
- Հետևել համակարգի արդյունավետությանն ու հաշվառել ծրագրին առնչվող բոլոր գործողությունները՝ վերլուծելով բոլոր գործընթացներն աշխատանքի որակական չափանիշների ապահովման մասով:
- Վերահսկել բոլոր աշխատանքային մեթոդներն ու պահպանել իրազեկվածությունը ամեն տեսակի որակի ապահովման չափանիշների վերաբերյալ, ինչպես նաև մշտապես հետևել որակի ապահովման գործընթացներին՝ առաջարկելով ուղղիչ գործողություններ ըստ անհրաժեշտության:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

- Կրթություն մեխանիկայի/էլեկտրականության կամ հարակից ոլորտում
- Առնվազն 5 տարվա փորձ հանքի շարժական սարքավորումների տեխսպասարկման ոլորտում, այդ թվում նաև անձնական և աշխատակիցների անվտանգության նկատմամբ ակտիվ մոտեցում, ինչպես նաև բնապահպանական տեսանկյունից պատասխանատու գործելաոճ:
- Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ մեխանիկական/էլեկտրականությանն առնչվող ծրագրերում, ինչպես նաև աշխատող սարքավորումների և հանգույցների ստուգում շահագործման ընթացքում:
- Միջազգայնորեն ընդունված ինժեներական մեթոդների ու կանոնակարգերի, ռիսկերի հիմքով գնահատման սկզբունքների, ինչպես նաև տեխսպասարկման մեթոդների և միջոցների իմացություն
- Հիմնական պատճառի վերլուծության մեթոդների, ստուգման միջոցների / x-ray, NDT և այլն/, ժանգոտումից պաշտպանության և այլ մեթոդների իմացություն
- Հարակից ոլորտների համակարգերի և չափանիշների, մասնավորապես՝ (բարձր ճնշմամբ աշխատող սարքեր), (խողովակների ստուգում), (վերգետնյա պահեստային բաքի ստուգում՝ քսուքներ և յուղեր), (շարժական սարքավորումներ), անշարժ սարքավորումներ՝ գեներատորներ/կոմպրեսորներ) լավ իմացություն կամ դրանց իմացության հավաստագրում
- Որակի ապահովման և վերահսկման տեսուչների հետ աշխատելու նախնական փորձ
- Գերազանց վերլուծական և համակարգչային հմտություններ, մասնավորապես՝ MS Office,
- Թիմային աշխատանքի պատրաստվածություն և միջանձնային շփման հմտություններ
- Գործող վարորդական իրավունք և վարելու պատշաճ փորձ

ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Բոլոր շահագրգիռ թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականները hr@lydianinternational.co.uk հասցեին: Անհրաժեշտ է նշել հայցվող պաշտոնի անվանումը հաղորդագրության թեմա տողում: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրության փուլն անցած թեկնածուները:

ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԿՁԲՆԱԺԱՄԿԵՏ

21 նոյեմբերի 2017

ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ

05 դեկտեմբերի 2017թ.